նշխարք կայ։ Եւ այլ շատ բազում և փառաւորութիւն կայ ի մէջ քաղաքին, Ո. Զ. և ՀԴ եկեղեցի կայ ի Հռոմ և ութհազար սրբոց գերեզման կայ ի քաղաքն և ի դրուց եւն. և յամէն օր հնգետասան եկեղեցի ի շուր կու գայի մեծ և փառաւոր եկեղեցիք և ամէն յոր ի գլխաւոր սուրբ առաքելոյն կերթայի և մեղաց թողութիւն խնդրէի. ով կարէ պատմել զփառաւորութիւն սուրբ եկեղեցեացն և երեք անգամ ի Փափան ի մօտ տարան գիս, և խիստ սէր և շաւաղաթ արաւ ինձ և թուխտ երեստ ամենն կու զարմանային, որ կու տանէր և ի հետս կը զուրուցեր։

Թվին Ջ. Խ. (= 1491) Յունիսի 9 եկաք ի Հռոմայ և բազում աւուրք. 46 օրն հասաք յաշխարհն դունդէլք ազգին որ են յԱլման. և գնացաք ի մեծն Կաստենձիայ[7]. և այլ բազում քաղաքաւ յեզրին գետովն գնացաք ի մէջ քաղաքն Պազլ[8], որ և բռնեցին մեզ թէ դուք չաշուտ էք։ Եւ այլ բազում քաղաքաւ գնացաք ի Ֆռանկֆուրթ[9] որ շատ հիանալի բան տեսաք. և անտից բազում յաւուրք գնացաք ի Ֆոիրուլխ[10], որ ասացին թէ այս քաղաքիս ՅՌ այգի կայ և մեծ հարկեց հարկեցին զմեզ. և անտից ի Ստրազբուխ[11] և անտից բազում քաղաքաւ բազում յաւուրք հասաք ի Կապլ[12] որ խիստ հարկեցին զմեզ։ Եւ անտից բազում յաւուրս Ըռին (Rhône) գետովն գնացաք հասաք ի մեծահամբաւ քաղաքն ի Կաւլոնիայ[13]. որ և ասացին թէ ՄՌ և ԻԴՌ տուն է. և խիստ մեծ և զարմանալի քաղաք է. և անդ էր մոգոց թագաւորաց գերեզմանն, և երեքին գլուխն ի վերայ գերեզմանաց դրած էր, և անդ էր երկոտասան հազար սրբոց նշխարքն, ամենուն մեծ եկեղեցին մէջն է շարած, ամէն մարդ կու տեսնու և մարմինքն գերեզմանած և եկեղեցի մի այլ կայ խիստ գեղեցիկ. քսանեւչորս կուսանաց մարմինքն սնտկով զրած էր. և այն եկեղեցին ուր մոգոց թագաւորաց գերեզմանն է ի վեր քաշած է և դուռս է քաշածն է և ըստ իւր և դէմ երեսին զսուրբ Աստուածածինն նաւ պատի դուս է քաշած և ըստ իւր արժանեացն զարդարած և տէրն մեր Քրիստոս ի գիրկն, և մէկ թաճ մի դրած ի գլուխն անգին զոհար ակներովն և մարգարտով զուգած էր որ զինչ կայ։ Հարցաք եկեղեցոյն իրիցներուն թէ զինչ կատարն ոչ լինի այս. ասացին թէ երկու հազար և հնգետասան հազարի ֆլորի է խարճեալ. և ի սիրտն սուրբ Աստուածածնին մարգարտէ խնծոր մի կապած քանի փրով փրով ընկուզի մի է և ի բոլորն ԺԲ հատ մարգարիտ, ամէն հատն քան ի գղթոր մի է, և մէջ ընդ մէջ, չորս ակն, երկու լա՛լ, երկու եաղուտ. ամէն մէկ քան ի մեծ գըղթոր մի է. և յաւագ խորանին բոլորն յիսունեւվեց դեղին պղինձէ գերեզման ի վեր քաշած և վեց գերեզման դեղին պըղինձէ գերեզման ի վեր քաշած. եկեղեցին հինգհարիւր կամարի վրայ էր բարձր և ահեղ. և զինչ յաւր. յաշխարհս բան կայ զամէնն ի դրուց ի դիհն նաւպաթ էր կարած. երեքհարիւր եօթանասունեւհինգ լուսնայմուտներ, և ամէն լուսնայմուտի երկանք երեք գիրկ. և եկեղեցուն լուսայմուտերն ամենն գունս ի գունոց ճամով զարդարած. և զանկակպուրճն (զանգակատուն) քան ի բերթ մի մեծ է, և ահեղ զանկակ մի ի կախ, որ ԻԸ հոգի կու քաշէ։ Եւ այլ բազում եկեղեցիք և վանորայք շատ կայ որ չկարացի կամ զքաղաքն կամ զեկեղեցուն պատմութիւն զգիրն զայն [զը]ել. և կեցաք յայնմ քաղաքն քսանեւերկու յաւր և խիստ հարկեցին զմեզ, մեղաց թողութիւն խնդրեցաք և ապա յելաք ի մեծէն Կաւլաւնիու, հոկտեմբերի քսանեւհինգ։

Եւ բազում քաղաքաւ հասաք ի թագաւորաց գերեզմանատունն քաղաքն որ է Ալման ազգին։ Եւ անտից բազում յաւուրս հասաք ի քաղաքն Սանդամարիայ տ'Աքս[14] ուր ամենաւրհնեալ և փառաւորեալ շապիքն է սուրբ Աստուածածնին. խիստք զարմանալի շէնք է. ամէն ոսկով զուգած և չորս դեղին պղնձէ սիւն է կանկնեցուցած եկեղեցի մէջն տեղն է և մեծ մեծ դեղին սիւն գլուխներն ոսկով զուգած և մեծ յոսկէ զաւօքսն սնտուկ մի մարգարտաշէն և սուրբ Աստուածամօր ամենօրհ-